

ԱՂՁՆԻՔԻ ՀԱՅԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԻՊԵՐԸ
/ XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ /

1. Պատմական և ազգագրական նյութերի համեմատական վերլուծու-
թյամբ փորձ է արվում բնութագրել աղձնիքահայերի բնակավայրային
համալիրները՝ կառուցվածքային և հասակագծային բնորոշ առանձնա-
հատկություններով հանդերձ, կատարել տիպաբանական դասակարգում՝
էթնիկ-ավանդույթային, տնտեսական, աշխարհագրական գործոնների հաշ-
վառմամբ: Դրանց դիտարկումը գուտ մշակութայինից բացի, ունի ժո-
ղովրդագրական նշանակություն, կարևոր է նաև գյուղական բնակչու-
թյան կազմի, նրանց տնտեսական զբաղմունքների, ինչպես նաև հասա-
րակական կենցաղի ուսումնասիրության համար:

2. Մեր գրի առած դաշտային ազգագրական նյութերի քննություն-
նը ցույց տվեց, որ Աղձնիքի գյուղական բնակավայրերը եղել են
երկու տիպի՝ հովտային և լեռնային: Հովտային, հատկապես դաշտա-
վարույթյամբ զբաղվողների բնակավայրերին բնորոշ են եղել ազգակ-
ցական և հարևանական կցաթաղերը: Այս տիպի գյուղերի հասակագիծը
բնութագրվում է կծկվածությամբ ու կլորությունամբ, որը հիմնակա-
նում պայմանավորված է եղել զբոհաստանական քնտանիքների մյուսա-
վորմամբ, ազգակցական և համայնքային համագործակցությամբ ու
ինքնապաշտպանության նպատակով: Կցաթաղերից գոյացած բնակա-
վայրերի կտուրները վեր են ածվել տնտեսական ու արտադրական վայ-
րի, անցուղիների, հավաքատեղերի և խաղահրապարակների: Կցաթաղերը
նպաստել են հաղորդակցումը դյուրացնելուն: Ազգական-հարևանները
միմյանց հետ հաղորդակցվել են/լուրեր հաղորդելիս, իրեր փոխա-
նակելիս և այլն/ պատկից տների միջնորմներում թողնված անցքերից:
/ակնառ/:

3. Աղձնիքի բարձր լեռնային վայրերին բնորոշ է եղել գյու-
ղական տների տեղանքով պայմանավորված ցրվածությունը, ուստի,
բնականաբար, այստեղ կցաթաղեր գրեթե չեն եղել: Այս հանգամանքը
հավաստված է տակավին X դարից: Պատմիչը գրում է. «, Եւ բնակու-
թիւն նոցա ի խորածորս և ի տապարս լեռանց և ի պրակս մայրեաց,
ի գագաթունս լեռանց: Եւ բնակեն առանձին քստ տունս ազգաց, և
այնչպի ի բացեայ են ի միմեանց մինչ թէ ոք յարանց զօրաւորաց
ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցե՛ հագիւ թէ ուրեք կարիցե

առնուել զբոմբիւն ճայնին, իբրև ի վիմաց ինչ արծազան լինելոյ կարծիս բերելով, /տես Թ.Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 203/:

4. Առհասարակ բնակավայրեր հիմնելիս /մասնավորապես բարձր լեռնային, խիստ կտրտված տեղանք ունեցող վայրերում/ հաշվի են առնվել էթնիկ ավանդույթից բացի, բնական պաշտպանվածութան, տրստեսավարման նպատակահարմարութան /մշակովի հողերի խնայողութուն, ջրամատակարարման, անտառների և արոտավայրերի մերձավորութուն/ , արևահայացութան և այլ հանգամանքներ:

Ա.Ե.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱԸ

ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐԼՈՒԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

1. Հայերենում Հայկ. է անվանվել Օրիոն համաստեղութունը:

Ըստ հունական ավանդութան, Օրիոնը հետապնդել է պլեյադուհիներին: Այլևայլ ժողովուրդների առասպելներում ևս հակադրվում են Օրիոն և Բազումք /Պլեյադուհիներ/ համաստեղութունները /երկնակամարում նրանք շարժվում են իրար հեռւից/: Բազումք համաստեղութունը հայերեն կոչվել է նաև Ալաունք կամ Ալաւունք, որոնք կարելի է համեմատել հունարեն պլեյադուհիների անվան հետ /հնդեվրոպական *pleu-, ,լողալ,, արմատից. պլեյադուհիները Պլեյոնես օվկիանոսուհու և Աթլասի դուստրերն են/: Ուրարտերեն alau նշանակում է տեր: Հետաքրքիր է, որ Հայկի հակառակորդ Բելի անունը ևս սեմական լեզուներում նշանակում է տեր /Խորենացու աղբյուրը՝ Մար Աբաս Կատինան ասորի էր/, և Հայկի ու Բելի հակադրութունը կարող է լինել ոչ թե Ուրարտուի և Ասորեստանի, այլ հայերի և Ուրարտուի միջև եղած պատերազմների հետագա առասպելականացված արտացոլումը:

2. Հաշվի առնելով, որ դիցաբանական հերոսի անունն առասպելի զարգացման տարբեր փուլերում կամ ազգակից ավանդույթներում կարող է անցնել նրա հակառակորդի վրա /Կ.Լևի-Ստրոս/, տեղին է հիշել, որ հայերի հայ ցեղանունը /որն ըստ ավանդութան կապվում է Հայկի անվան հետ/ փորձ է արվել կապելու հնդեվրոպական , ,տեր, այր, , բառի հետ: Ըստ մոնղոլական ժողովուրդների ավանդութունների, Խուխդեյ-մերգենը/ երկնային նետածիգ/ շանթարձակ աստվածութուն էր, ժողովրդի նախահայրը, 9 որդու և 9